

**Արա Աբրամյանի էլույթը**  
**Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողով, 2002 թ.**

Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ  
պարոն Ռոբերտ Քոչարյան  
Ձերդ սրբությունն Վեհափառ Տեր Գարեգին Երկրորդ  
Տիկնայք և պարոնայք, սիրելի հայրենակիցներ

Նոր հարյուրամյակը մեր ժողովրդին, ինչպես նաև համայն մարդկությանը նոր մարտահրավեր է նետել: Դժվար կլինի պատասխանել այդ մարտահրավերին, եթե ամենայն վճռականությամբ ձեռնամուխ չլինենք մեր պատմական անցյալի, ներկայի և ապագայի հետ առնչվող համազգային պրոբլեմների լուծմանը: Մենք չենք կարող դիմակայել այդ մարտահրավերին, եթե չհստակեցնենք համազգային առաջնահերթությունները և դրանց նկատմամբ Հայաստանի ու Սփյուռքի մոտեցումները: Իսկ այդ ամենը մենք կարող ենք անել միայն համազգային համախմբվածության պայմաններում, միասնական կանքով և վճռականությամբ:

Այսօր Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, խորապես գնահատելով արդի պայմաններում ստեղծված իրավիճակը, Հայաստան-Սփյուռք երկրորդ համաժողովի հրավիրմամբ, լուրջ քայլ է կատարում համազգային համախմբվածության գործընթացի ապահովման, պատմական Հայրենիքի և Սփյուռքի առջև ծառայած ընդհանուր և առաջնային խնդիրների լուծման ուղղությամբ:

Օգտվելով առիթից «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության անունից ողջունում ենք այդ պատմական քայլը և միաժամանակ հավաստում, որ մենք պատրաստ ենք մեր արժանի ներդրումն ունենալ այդ ազգանվեր մեծ գործում:

Օգտագործելով այս բարձր համաժողովի ամբիոնից էլույթ ունենալու առիթը, կցանկանայի մասնակիցների ուշադրությունը հրավիրել համազգային շահերի տեսանկյունից գերակայություն ունեցող մի քանի խնդիրների վրա, որոնք, մեր կարծիքով,

կարևոր են ինչպես աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի, այնպես էլ Հայաստանում ապրողների համար:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ, սերնդե-սերունդ փայփայել է անկախ պետություն ունենալու հույսը: Այդ ճանապարհը շատ երկար ու դժվար է եղել:

1918 թ. ստեղծված առաջին ազգային պետությունը երկար կյանք չունեցավ: Միայն ավելի քան յոթ տասնամյակ անց, մեր ժողովուրդը շատ դժվարին պայմաններում կարողացավ ստեղծել իր անկախ պետականությունը, այն էլ իր պատմական տարածքի մի փոքր հատվածի վրա: Սակայն, նոր անկախ պետությունը ստեղծման օրվանից հայտնվեց տնտեսական շրջափակման մեջ, որի արդյունքում հարատևում է սոցիալ-տնտեսական ճգնաժամը՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

Հայաստան երկրում ստեղծված դժվարությունները հայտնի են բոլորին և կփորձենք ավելորդ անգամ չխոսել դրա մասին:

Որն՞ է ստեղծված իրավիճակից բխող օրվա հրամայականը, համազգային խնդիրների օրակարգի առաջին հարցը :

Ամենևին չթերագնահատելով հայապահպանության գործի կարևորությունը սփյուռքում, այնուհանդերձ, ցանկանում ենք հատկապես ընդգծել, որ ստեղծված իրավիճակում, բացառիկ գերակայություն ունեցող համազգային խնդիրը՝ Հայաստանի, որպես անկախ պետության, ամրապնդումն ու հզորացումն է : Անվերապահ կարելի է ասել, որ մենք հայոց պետականության պահպանման և ամրապնդման գործընթացում այսուհետ սխալվելու իրավունքը չունենք:

Համայն հայության ազգային գերխնդիրը Հայաստան պետությունն է, քանզի նրա հզորությունից ու կայունությունից է հիմնականում կախված նաև համազգային բոլոր խնդիրների լուծման հաջողությունը: Հզոր, անկախ Հայաստանի գոյությամբ է պայմանավորված Սփյուռք հասկացողությունը, նրա, որպես ազգային հավաքական միավորի գոյությունը:

Իսկ ազգային պետականության ամրապնդման, երկրի հզորացման համար անհրաժեշտ է ստեղծել ամուր տնտեսական հիմք, դինամիկ զարգացող էկոնոմիկա: Հենց այստեղ է, որ մեծ անելիքներ ունեն ոչ միայն հայաստանցիները, այլ և համայն սփյուռքը: Հենց այստեղ է, որ մենք պետք է համախմբվենք, հանդես գանք միասնական ճակատով:

Հայերի աշխարհասփյուռ վիճակը ազգի ողբերգությունն է, սակայն դա կարող է բարիքի վերածվել, եթե սովորենք Սփյուռքի հզոր պոտենցիալը ակտիվորեն ներգրավել և խելամիտ օգտագործել Հայաստանի տնտեսական զարգացման գործում: Մենք պետք է այսօր օգտվենք ներկա համաժողովի ընձեռած հնարավորություններից և համատեղ որոշենք Սփյուռքի դերն ու տեղը Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Մեր կարծիքով այս հարցում սփյուռքը անելիքներ ունի հատկապես ֆինանսական կոնկրետ ներդրումների, նոր տեխնոլոգիաների ներդրման, հայաստանյան արտադրանքի արտահանումների ընդլայնման բնագավառներում: Սփյուռքի ձեռներեցները վճռական դեր կարող են խաղալ նաև անմիջական օտար ներդրումները Հայաստան ներկրելու, համատեղ ձեռնարկությունների հիմնադրման գործընթացը ընդլայնելու գործում:

Այս ամենի համար կպահանջվի Հայաստան-Սփյուռք համակարգված գործունեություն, որը իր հերթին կնպաստի միջազգային տնտեսության հետ Հայաստանի ինտեգրացման գործընթացի արագացմանը:

Մենք ողջունում ենք, որ Հայաստանը խրախոսում է ներդրումային ծրագրերը: Սակայն մի բան է խրախուսելը, մեկ այլ բան ներդրումների համար նախընտրելի պայմանների ստեղծումը: Ակնկալում ենք, որ Հայաստանի իշխանությունները անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն երկրում ներդրումային մթնոլորտը բարեփոխելու ուղղությամբ: Սփյուռքի ներդրող քաջատեղյակ է երկրի շուկայի «խիստ ռիսկային» լինելու մասին: Ուստի նա պետք է համոզված լինի, որ երկրում առկա է ներդրումների ապահովագրման այնպիսի կայուն համակարգ, օրենսդրական դաշտ, որը նվազեցնում է ռիսկայնությունը:

Եվ եթե Հայաստանի կառավարությունը ցանկանում է ներդրումների շնորհիվ ունենալ ռեալ տնտեսական տեղաշարժ, ապա պարտավոր է նաև արմատախիլ անել երկրի կայուն զարգացման համար ուղակի չարիք հանդիսանող այնպիսի երևույթները, ինչպիսիք են՝ տնտեսության կլանային համակարգը, կաշառակերությունն ու կոռուպցիան: Հակառակ դեպքում, մասշտաբային ներդրումները և տնտեսական առաջընթացը կմնան միայն բարի ցանկություններ:

Այսօր ազգային պետականության ամրապնդման, երկրի հզորացման շահերը պահանջում են մշակել Հայաստանի

տնտեսական զարգացման ստրատեգիական համալիր ծրագիր, որոշել առաջնահերթությունները, դրանցում Սփյուռքի դերն ու տեղը: Մեր կազմակերպությունը կարող է ապահովել Ռուսաստանի լավագույն մասնագետների մասնակցությունը այդ ծրագրի մշակման գործում:

Ներկայումս համազգային հարցերի օրակարգը համալրվել է մի կարևոր հարցով ևս: Դա Հայաստանից արտագաղթած աշխատանքային միգրանտների խնդիրն է: Անկախ փորձագետների տվյալներով նրանց թիվը վաղուց անցել է մեկ միլիոնի սահմանը: Աշխատանքային միգրանտների թիվը մեծ է, հատկապես Ռուսաստանում, Եվրոպայում և ԱՊՀ որոշ երկրներում:

Մեր հայրենակիցներից շատերը այդ երկրներում դասվում են անօրինական միգրանտների շարքը և ենթարկվում իրավական և սոցիալական զրկանքների: Մենք պետք է պաշտպանենք նրանց իրավունքներն ու սոցիալական շահերը: «Ռուսաստանի հայերի միությունը» ստեղծել է «վերադարձ» հիմնադրամը, որի նպատակն է պաշտպանել միգրանտների շահերը, նրանց համար ստեղծել պայմաններ հայրենիք վերադառնալու համար:

Սակայն միգրանտների հարցի վերջնական լուծման կարճ ճանապարհը Հայաստանի աշխատանքային շուկայի աշխուժացումն է: Այստեղ ևս սփյուռքը կարող է ասել իր վճռական խոսքը:

Պատմական նոր իրողությունները երբեմն մեզ ստիպում են վերանայել համազգային համարվող հարցերի շրջանակը, ճշտել դրանց ցանկը: Սակայն կան հարցեր, որոնք հաստատագրված են համահայկական համարվող հարցերի օրակարգում: Այդ հարցերի մեջ իր կայուն տեղն ունի հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, որով պայմանավորված է նաև հայ-թուրքական հետագա հարաբերությունների ճակատագիրը:

Այս հարցում Սփյուռքը և Հայաստանը ունեն միասնական դիրքորոշում: Հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն միջազգային իրավունքի նորմերի հիման վրա, Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում:

Հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի պարտքն է համայն մարդկության հանդեպ, վերապրածների և նրանց

սերունդների առջև, որոնցից շատերը բնակվում են համատարած սփյուռքում: Միանգամայն ճիշտ է ասված, որ ցեղասպանության եղելությունը չճանաչելը ոչ միայն դիպչում է անմիջապես վերապրածներին, այլև վիրավորում է զոհերի հիշատակը և այդպիսով սպանում նրանց մեկ անգամ ևս:

Եվ վերջապես, մեր վերաբերմունքն այս հարցին որոշվում է ոչ միայն զուտ սկզբունքային նկատառումներով, ոչ միայն նրանով, որ այդպես են պահանջում իրավունքն ու արդարությունը: Սա ոչ այքան մեր անցյալի, որքան՝ ապագայի խնդիրն է: Մենք ելնում ենք նրանից, որ առանց Թուրքիայի կողմից այդ հանցագործության փաստի միանշանակ ճանաչման, մենք չենք կարող մեզ զերծ համարել հանցագործության կրկնության վտանգից: Սուևգայիթի արյունոտ իրադարձությունները, Ղարաբաղի հայերին ոչնչացնելու նպատակով Ադրբեջանի կողմից վարած պատերազմին Թուրքիայի աջակցությունը հաստատում են մեր տազնապները:

Այսօր համահայկական հարցերի օրակարգի առավել կարևորագույն հարցերից մեկը Ղարաբաղի կարգավիճակի հարցն է: Միանշանակ գտնում ենք, որ այդ հարցը պետք է լուծվի Ղարաբաղի հայության իրավունքների ճանաչման հիման վրա, խաղաղ ճանապարհով և միասնական փաթեթով:

Թվարկված հարցերը կարելի է լուծել միայն համախմբված, միասնական ջանքերով, ժամանակի ոգուն համապատասխան ազգային գաղափարախոսության առկայության պայմաններում: Կարծում են, որ համազգային գաղափարախոսության մշակման խնդիրը պետք է դառնա Հայաստան-Սփյուռք համագործակցության գլխավոր նպատակներից մեկը:

Այսօր Հայաստան-Սփյուռք բազմակողմանի հարաբերությունները ունեն կազմակերպական-կառուցվածքային խնդիրներ: Մենք պետք է լուրջ տեղ հատկացնենք միասնաբար և համատեղ գործելու պատրաստակամությունը ապահովող համարժեք կառույցներ ու մեխանիզմներ ստեղծելու գործընթացին: Հասունացել և օրախնդիր է Սփյուռքը ներկայացնող միասնական ներկայացուցչական կառույցի ստեղծումը:

Կարծում ենք ճիշտ կլինի, որ ներկա խորհրդածողովը ձևավորի մի հանձնախումբ, կամ ինչպես ընդունված է ասել կազմկոմիտե, այդ կառույցի ստեղծման մանրամասնությունները քննարկելու և համապատասխան լուծումներ գտնելու համար:

Մեր կազմակերպությունը արդեն ունի իր կողմից մշակված մոտեցումները այդ հարցի վերաբերյալ, և այն սիրով կարող ենք դարձնել համընդանուր քննարկման առարկա:

Սիրելի հայրենակիցներ,

Պատմությունը մնայուն ընթացք է, որտեղ անցյալը, ներկան և ապագան փոխկապակցված են: Եվ պատմությունը նրա համար է, որպեսզի նրանից դասեր քաղենք:

Իսկ մեր ժողովրդի պատմության ամենագլխավոր և կենսական դասերից մեկն այն է, որ երբ մենք եղել ենք համախմբված ու միասնական, ունեցել ենք հաջողություններ: Դրա վառ վկայությունը Ղարաբաղյան հարցի վերաբերյալ Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի հաղթական արդյունքն է: Եվ ընդհակառակը, անդառնալի կորուստներն ու պարտությունները մենք կրել ենք այն ժամանակ, երբ միասնական չենք եղել, իմաստություն ու քաջություն չենք ունեցել ազգի ու հայրենիքի գերագույն շահերը վեր դասելու անցողիկ ու մասնավոր շահերից, որի համար, ավաղ, շատ թանկ ենք վճարել բոլորս:

Այս տեսանկյունից, այսօր, ազգային շահերի գերակայությունն ավելի քան կենսական ու հրամայական են և պահանջում են միասնություն ու համախմբվածություն: Ուստի «Մեր ուժը մեր հավաքական միասնության մեջ է» կարգախոսը եկեք դարձնենք ամենօրյա գործելակերպ՝ թե մայր Հայրենիքում, և թե համայն Սփյուռքում:

Յուրաքանչյուր հայ, ուր ապրելիս լինի, Հայրենիք կառուցող մի միավոր է: Այդ առանձին միավորները պետք է ժողովել, մեկ շաղախով միաձուլել և կառուցել Հայոց Ամուր Տունը, այն դարձնելով «Հույսի և Լույսի Հայրենիք»:

Կարծում եմ, այս կլինի Հայաստան-Սփյուռք երկրորդ խորհրդաժողովի անանց խորհուրդը:

Շնորհակալություն ուշադրության համար: